ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ԱԼԵՔՍԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԷԴՈՒԱՐԴ ՍԵՐԳԵՅԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳԵՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԻԼՈՆԱ ԶԱՎԵՆԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 14:00-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Վ. Տերյան 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի նոյեմբերի 15-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ Վ.Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u> Ժամանակակից շուկայական տնտեսությունը համալիր օրգանիզմ է՝ բաղկացած հսկայական շարք արդյունաբերական, առևտրային, ֆինանսական և տեղեկատվական կառույցներից, որոնք գործում են իրավական համակարգի բիզնեսի կանոնակարգերով և միավորվում մեկ ընդհանուր հասկացության՝ շուկայի շուրջ: Մրցակցությունը շուկայական տնտեսության էությունն արտահայտող առանցքային հասկացությունն է:

Շուկայական հարաբերություններն անհնար է պատկերացնել առանց տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցության: Նույնիսկ զարգացած շուկայական համակարգ ունեցող աշխարհի ամենաառաջատար երկրների տնտեսության պետական կարգավորման կարևորագույն խնդիրը առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը միտված քաղաքականության իրականացումն է, քանի որ, հենց մրցակցությունն է, որ հանդես է գալիս որպես տնտեսական համակարգի արդյունավետ կենսագործման առաջնային պայման և նպաստում տնտեսական ներուժի հզորացմանը:

Հայաստանում առողջ մրցակցային միջավայրի ձևավորման քաղաքականության իրականացման առումով, թերևս ամենախոցելի խնդիրներից մեկը վարվող ընդհանուր տնտեսական և մրցակցային քաղաքականությունների ոչ բավարար կորդինացվածությունն ու ներդաշնակությունն է:

Մրցակցային օրենսդրության կիրարկման արդյունավետության առումով լուրջ խնդիր է հանդիսանում շուկաներում գնագոյացման և ազատ մրցակցության իրականացման նկատմամբ վերահսկողության կիրառումը:

Ագրոպարենային համալիրի հաջող զարգացումը հանրապետությունում էապես կախված է ոչ միայն կոոպերացիաների ձևավորմամբ ընդլայնմամբ՝ ինչպես նշում են շատ մասնագետներ, այլ նաև այս ոլորտում մրցակցային դաշտի ապահովմամբ: Շուկայական հարաբերությունների պայմաններում մրցակցության ապահովումը կարող է խթանել տարբեր գործառույթներ ինչպես գյուղատնտեսական մթերքների արտադրության, դրանց վերամշակման, իրացման, այնպես էլ ագրոպարենային ոլորտի ապրանքային շուկաների ընդլայնման:

Ագրոպարենային ոլորտում մրցակցային իրավիճակի ապահովումը ակնհայտորեն ստանում է մեծ կարևորություն, քանի որ գերիշխող դիրքի չարաշահումների, համակենտրոնացումների ձևավորման, անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների և այլ դրսևորումների արդյունքում խեղաթյուրվում է մրցակցությունն ու հատկապես ոլորտում գնանգոյացման ձևավորման բնական մեխանիզմը և լուրջ վնաս հասցնում ինչպես սպառողների շահերին այնպես էլ մրցակիցներին:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է ագրոպարենային ոլորտում առկա ապրանքային շուկաների մրցակցային միջավայրի գնահատման, մրցակցային մոտեցումների մշակման, հակամենաշնորհային քաղաքականության ձևավորման ու արմատավորման և այդ համատեքստում՝ ագրոպարենային ոլորտում ընդհանուր տնտեսական քաղաքականության հետ մրցակցության զարգացման ուղիների բացահայտման անհրաժեշտությամբ, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտում ազատ, բարեխիղճ մրցակցային միջավայրի բարելավմանն և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների և առաջարկությունների մշակումն է: Այդ նպատակի իրականացման համար աշխատանքում դիտարկվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսական մրցակցության հիմքերը շուկայական հարաբերություններում և հետազոտել մրցակցային միջավայրի ձևավորման պայմանները ՀՀ ագրոպարենային համակարգում,
- վերլուծել մրցակցության կարգավորման հիմքերը և զարգացման փուլերը ՀՀ ագրոպարենային համակարգում,
- ուսումնասիրել ագրոպարենային համակարգում մրցակցության պետական կարգավորման միջազգային փորձը,
- վերլուծել տնտեսական մրցակցության իրավիճակը ՀՀ ագրոպարենային համակարգի մի շարք ապրանքային շուկաներում և վերհանել մրցակցային առկա խնդիրները,
- վերլուծել ՀՀ մրցակցային միջավայրի կարգավորման օրենսդրական դաշտը և դրա ազդեցությունը ագրոպարենային համակարգում իրականացվող բարեփոխումների վրա,
- վերլուծել ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության արդյունավետությունը պայմանավորող գործոնները և ներկայացնել դրանց բարելավման ուղիները,
- մշակել ՀՀ ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի կարգավորման հայեցակարգային դրույթներ:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան:</u> Հետազոտության օբյեկտը ՀՀ ագրոպարենային համակարգն է, իսկ առարկան՝ այդ համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության արդյունավետության բարձրացման կառուցակարգերի կատարելագործումը:

<u>Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:</u> Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տարբեր դպրոցների, ուղղությունների, մասնավորապես, մրցակցության տեսության դասական աշխատութ-

յունները, շուկայական և անցումային շրջանի տնտեսությունների հիմնախնդիրների ու դրանց կարգավորման վերաբերյալ հայրենական ու արտասահմանյան հայտնի հեղինակների ուսումնասիրությունները:

Ուսումնասիրությունների համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) տարեկան գործունեության ծրագրերն ու հաշվետվությունները, ապրանքային շուկաների վերլուծությունների արդյունքները, պետական մարմինների պաշտոնական հրապարակումները, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները և ագրոպարենային համակարգի որոշ ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը:

<u>Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:</u> Ատենախոսությունում իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները հանգեցրել են մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ ենք համարում հետևյալները.

- ագրոպարենային համակարգում մրցակցային միջավայրի և տնտեսական մրցակցության պաշտպանության գործընթացի համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ ագրոպարենային համակարգի ապրանքային շուկաներում, մշակվել են դրանց հաղթահարման ուղիները,
- մշակվել են ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական լիազոր մարմնի լիազորությունների ընդլայնման և գործնական կիրառման կատարելագործման կառուցակարգեր,
- ՀՀ ագրոպարենային համակարգում սպառողների շահերի պաշտպանության նպատակով բացահայտվել են առկա հիմնախնդիրները, մշակվել են դրանց լուծման ուղիները,
- մշակվել են ՀՀ ագրոպարենային համակարգում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կատարելագործման ռազմավարական դրույթներ:

<u>Հետազոտության արդյունքների գործնական ու կիրառական նշանակությունը:</u> ՀՀ ագրոպարենային ոլորտում ազատ մրցակցության միջավայրի ապահովման քաղաքականության իրականացման, օրենսդրական բարեփոխումների և զարգացման ռազմավարական ուղիների մշակման նպատակով ատենախոսության մեջ ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության և ագրոպարենային ոլորտի զարգացման ուղղված ՀՀ պետական լիազոր մարմինների գործունեություններում:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:</u> Ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները ներկայացվել ու քննարկվել են Հայաստանի ազգային

ագրարային համալսարանի Ագրարային էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման և ագրարային քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում, արդյունքները արտացոլվել են հեղինակի հրապարակած 12 գիտական հոդվածներում:

<u>Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Նյութը շարադրված է 143 էջի վրա՝ ներառում է 15 գծանկար, 30 աղյուսակ և գրականության 80 աղբյուր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

<u>Ներածությունում</u> հիմնավորված է թեմայի արդիականությունն ու ձևակերպված խնդիրների կարևորությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը՝ արված առաջարկություններով:

<u>Ատենախոսության առաջին գլխում՝ «Մրցակցային միջավայրի կարգավորման տեսական հիմքերը և մեթոդաբանությունը».</u> վերլուծվել և ներկայացվել են «**մրցակցային քաղաքականություն**» հասկացության տեսամեթոդական հիմքերը, հետազոտվել են ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի կարգավորման միջազգային փորձը, դրա ձևավորման պայմանները, մրցակցության ձևերն ու դրսևորումները, բացահայտվել են ազատ շուկայական հարաբերություններում մրցակցային միջավայրի և բարեխիղճ մրցակցության վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնները, գնահատվել են տնտեսական մրցակցության դերը ընդհանուր և մասնավորապես ագրոպարենային ոլորտի զարգացման գործում: Դիտարկվել են մրցակցային միջավայրի կարգավորման անհրաժեշտությունը ագրոպարենային ոլորտում՝ շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես նաև մրցակցության կարգավորման տեսական հիմքերը:

Տնտեսությունն այն ոլորտն է, որտեղ պետության կողմից կարգավորումը առանցքային է և առանց այդ միջամտության տնտեսությունը արդյունավետ չէ: Հետևաբար բոլոր ժամանակաշրջաններում մշտապես անհրաժեշտություն է եղել գտնել այն օպտիմալ մեխանիզմները, որոնց կիրառմամբ չի վնասվի տնտեսությունը: Մրցակցության կարգավորման ուղիները տնտեսության կարևորագույն խնդիրներից են, հետևաբար տնտեսագետների ուշադրության կենտրոնում են միշտ եղել տնտեսության այս կամ այն ոլորտում պետական միջամտության թույլատրելիության հիմնահարցերը:

Տնտեսության մրցակցային իրավիճակի վերլուծությունն ու գնահատումը, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից անբերեխիզճ մրցակցության երևույթների դրսևորումը, հակամրցակցային համաձայնությունների կնքումը, գերիշխող դիրքի չարաշահումները և մրցակցային օրենսդրության ցանկացած այլ խախտումներ գնահատվում է կոնկրետ տվյալ ապրանքային շուկայի շրջանակներում:

Ներկայիս տնտեսական պայմաններում մրցակցության կարգավորումը չպետք է լինի բացարձակ արգելող: Այսինքն, այն չպետք է մեխանիկորեն պատժի ցանկացած դրսևորում, որը թեկուզ ձևականորեն հնարավոր է դիտվի որպես խախտում:

Մրցակցային օրենսդրության ճիշտ կիրառման նախադրյալներից մեկը նաև ապրանքային շուկայի հստակ որոշումն է: Դա իրենից ներկայացնում է բավականին բարդ խնդիր, ուստի անհրաժեշտ է ապահովել ինչպես առկա օրենսդրության կարգավորումների հստակ կիրառում, այնպես էլ որոշակի կարգավորումների կատարելագործում:

<u>Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Մրցակցային միջավայրի կարգավորման առանձնահատկությունները ՀՀ ագրոպարենային համակարգում»,</u> ուսումնասիրվել են մրցակցային հարաբերությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները ՀՀ ագրոպարենային ոլորտում, վերլուծությունների հիման վրա վեր են հանվել մրցակցային քաղաքականության կարգավորման առումով թույլ տրված բացթողումներն ու օրենսդրական վրիպումները, ինչպես նաև ոլորտում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման խոչընդոտող գործոնները: Ուսումնասիրվել են ագրոպարենային ոլորտի մի շարք ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակն ու դրանցում մրցակցությանը խոչընդոտող հարցերը, ինչպես նաև մրցակցության կարգավորող պետական լիազոր մարմնի՝ Հանձնաժողովի իրավասությունների շրջանակն ու ագրոպարենային ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մրցակցությունը սահմանափակող երևույթների հատկորոշման ու գնահատման, ինչպես նաև հետագայում դրանց կանխման հարցերը:

«Կարագ» ապրանքային շուկա[1]: Ըստ ուսումնասիրության արդյունքների 2018թ. և 2019թ. ՀՀ-ում կարագի պահանջարկը հիմնականում բավարարվել է ներկրման ծավալների հաշվին: Կարագի հիմնական ներկրում 2019 թվականին իրականացվել է Նոր Զելանդիայից՝ 42% և Ուկրաինայից՝ 36% (գծապատկեր 1):

[1] Հետազոտության արդյունքները, բացահայտված խնդիրները, արված եզրակացություններն ու դրանց հիման վրա ներկայացված առաջարկները ներառված են ՄՊՀ հրապարակման մեջ՝ http://competition.am/uploads/resources/Butter_commodity_market.pdf



Գծապատկեր 2. Հայաստանում արտադրված կարագի կառուցվածքը 2018-2019թ.թ. ըստ արտադրող ընկերությունների մասնաբաժինների[3]

---

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

[3] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:



Գծապատկեր 1. Հայաստան ներմուծված կարագի կառուցվածքը 2018-2019թ.թ. ըստ գործընկեր երկրների[2]

Ըստ ուսումնասիրության արդյունքների 2019թ. կարագի տեղական արտադրության ծավալները մոտ 42%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, ինչը ուղեկցվել է նաև կարագ արտադրող ընկերությունների թվաքանակի ավելացմամբ՝ 28-ից հասնելով 30-ի (գծապատկեր 2):

Համեմատելով 2019թ. տվյալները նախորդ տարվա հետ, նկատելի է, որ կարագի տեղական արտադրության ավելացման պայմաններում Հայաստանում կարագի ինքնաբավության աստիճանը բարձրացել է 7 տոկոսային կետով՝ կազմելով 22%:

Չնայած Հայաստանում կարագի իրացման ծավալների կրճատմանը՝ տվյալ ժամանակահատվածում ավելացել է նաև կարագի արտահանման ծավալները՝ կարագի սպառման մեջ կազմելով 1.2% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2018 և 2019թթ. Հայաստանում կարագի սպառման գործընթացը[4]

h/h	Ցուցանիշ	2018թ.		2019թ.	
1	**Ընդամենը կարագ (3+4+5)**	**5574957,2**		**5574456,5**	
	այդ թվում՝				
2	Մնացորդ ժամանակաշրջանի սկզբում (կգ)	859578,6		919913,3	
3	Արտադրություն (կգ)	715344,4		1019011,6	
4	Ներմուծում (կգ)	4000034,1		3635531,6	
5	**Կարագի սպառում (8+9+10)**	**4764682,7**		**4397312,3**	
6	այդ թվում՝	կգ	%	կգ	%
7	Օգտագործում սեփական արտադրությունում	1182883,7	21,2	1303542,1	23,4
8	Արտահանում	17428,0	0,3	69212,0	1,2
9	Իրացում ՀՀ տարածում	3564370,9	63,9	3024558,1	54,3
10	**ՀՀ-ում իրացման միջին գին (դրամ/կգ)**	**3442**		**3316**	
11	**Մնացորդ ժամանակաշրջանի վերջում (կգ)**	**810274,5**		**1177144,3**	

Կարագի գնի փոփոխության նկատմամբ սպառողների զգայունությունը որոշելու նպատակով, իրականացվել է կարագի նկատմամբ պահանջարկի գնային առաձգականության գործակցի հաշվարկ:

[4] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

$$\mathbf{E}_d = \frac{\Delta \mathbf{Q}}{\Delta \mathbf{P}} \qquad (1)$$

Այսպես, կարագի պահանջարկի գնային առաձգականության գործակիցը 2019թ.-ին 2018թ.-ի նկատմամբ՝ $|E_d|=8.3$: Այսինքն, 2019թ. 1 կգ կարագի մեծածախ գնի 1%-ով ավելացումն հանգեցրել է նրա նկատմամբ պահանջարկի 8.3% կրճատման:

«Կարագ» ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանի գնահատման համար հաշվարկվել են ապրանքային շուկայի կենտրոնացվածության մակարդակը բնութագրող՝ շուկայական կենտրոնացվածության գործակից (CR), Հերֆինդալ-Հիրշմանի (HHI) և Լինդայի (IL) ինդեքսները:

$$CR=\sum_{i=1}^{n} D_i \qquad (2)$$

«Կարագ» ապրանքային շուկան 2019թ. ունի կենտրոնացվածության միջին մակարդակ՝ $CR_3=68$:

Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը ստացվում է շուկայում ընկերությունների մասնաբաժինների քառակուսիների հանրագումարի արդյունքում:

$$HHI = Y_1^2 + Y_2^2 + Y_3^2 + \ldots + Y_n^2, \qquad (3)$$

Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի հաշվարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2019թ. համար՝ HHI=2674:

Առաջին երկու ընկերությունների համար Լինդայի ինդեքսը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$IL_2 = \frac{K_1}{K_2} x100\% \qquad (4)$$

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, 2018թ.-ին $IL_2=564$, իսկ 2019թ.-ին՝ $IL_2=327$, ինչը վկայում է շուկայում կենտրոնացվածության մակարդակի կրճատման մասին:

«Կարագ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել այն հնարավոր խնդիրները, որոնք կարող են որոշակի ազդեցություն ունենալ շուկայում առկա մրցակցային միջավայրի վրա:

- Առկա են անհամապատասխանություններ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկով և «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգով ներկայացվող «Կարագ սերուցքային» եզրույթի սահմանման և ներկայացվող պահանջների մեջ[5], որն իր հերթին կարող է խնդիրներ առաջացնել ներմուծման ժամանակ «սերուցքային կարագի» և էմուլգատորների հավելումներ պարունակող ապրանքներիի նույնականացման ժամանակ:

[5] http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.04_01.09.2017.pdf

- Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ հաճախ առևտրի կետերում (հատկապես խոշոր առևտրային ցանցերում) կարագը, սփրեդը և մարգարինը ներկայացված են միասին, ինչը կարող է շփոթություն առաջացնել սպառողների շրջանում:

«Պանիր» ապրանքային շուկա: «Պանիր» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ 2019-2020թթ. պանրի ներկրում իրականացվել է հիմնականում Նոր Զելանդիայից, ՌԴ-ից և Գերմանիայից (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ՀՀ ներմուծված պանրի կառուցվածքը 2019-2020թ.թ. ըստ արտահանող երկրների[6]

ՀՀ-ում հիմնականում արտադրվում է փափուկ, կիսապինդ, պինդ, աղաջրային, չեչիլ, մոցարելլա, հալած պանրի տեսակներ: Շուկայում արտադրության ծավալներով 2019-2020թ.թ. առաջատար է «Իգիթ» ՍՊԸ, որը իրացման ծավալներով գրավում է գերիշխող դիրք:

Շուկան միջին կենտրոնացված է, որտեղ CR_3=56, իսկ HHI=1484, որը վկայում է, որ շուկան մրցակցային է: Լինդայի ինդեքսի հաշվարկը ցույց է տալիս, որ 2019 թվականի տվյալների համաձայն IL_2=616, իսկ 2020 թվականին՝ IL_2=735: Նշվածից հետևում է, որ «Պանիր» ապրանքային շուկայում առկա է մեկ գերիշխող դիրք ունեցող ընկերություն (գծապատկեր 4):

«Պանիր» ապրանքային շուկայում իրականացված հարցումների արդյունքներով առանձնացվել են առկա խոչընդոտները հետևայալ խմբերով.

[6] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

- արտադրության ընդլայնմանը խոչընդոտող գործոններ,
- շուկայում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մեծ ծավալի ֆինանսական միջոցներ և կատարված ներդրումների հետգնման համար պահանջվող համեմատաբար երկար ժամանակահատված,
- շուկայի հագեցվածություն,
- ապրանքի իրացման տարածքային ընդգրկվածություն:



Գծանկար 4. Պանրի իրացման ծավալում ընկերությունների մասնաբաժինները 2019թ.-2020թ.[7]

Կոնյակի շրջանառության ոլորտի ուսումնասիրություն[8]. Առանձնացվել են ոլորտի երեք ապրանքային շուկաներ, դիտարկվել դրանց կառուցվածքը (աղյուսակ 2):

Շուկայում գերիշխող դիրք ունեցող ընկերություն չկա, իսկ շուկան միջին կենտրոնացված է, որտեղ CR3=45,69, իսկ HHI=1006: Լինդայի ինդեքսի հաշվարկը ցույց է տալիս, որ 2015 թվականի տվյալների համաձայն IL_2=187, իսկ IL_3=189, այսինքն $IL_2<IL_3$, որը վկայում է ապրանքային շուկայում առաջին երեք

[7] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

[8] Հետազոտության արդյունքները, բացահայտված խնդիրները, արված եզրակացություններն ու դրանց հիման վրա ներկայացված առաջարկները ներառված են ՄՊՀ հրապարակման մեջ՝ http://competition.am/uploads/resources/Study_cognac.pdf

ընկերությունների շուկայական իշխանություն ունենալու փաստի մասին, չնայած այն հանգամանքին, որ նրանք չունեն գերիշխող դիրք:

Ոլորտի կենտրոնացվածության աստիճանի գնահատման համար ինդեքսները հաշվարկվել են ըստ առանձնացված ապրանքային շուկաների:

Աղյուսակ 2.[9]

2018 և 2019թթ. արտադրված կոնյակի սպիրտի կառուցվածքն ըստ տեսակներ (լ. 100% սպ.)

հ/հ	Ընկերության անվանումը	2018թ.		2019թ.	
		արտադ.	իրացում	արտադ.	իրացում
1	Երեքից հինգ տարի (ներառյալ) հնացմամբ	8335091,0	659494,9	8843420,5	367507,7
2	Վեցից տասը տարի (ներառյալ) հնացմամբ	1567491,2	221705,4	1516212,0	215209,7
3	Տասը տարուց ավելի հնացմամբ	90981,4	19746,6	81954,0	17511,4
Ընդամենը		9993563,6	900946,9	10441586,5	600228,8

Երեքից հինգ տարի (ներառյալ) հնացմամբ հայկական արտադրության կոնյակների մասով.

$CR3_{2018թ.}=95$ $HHI_{2018թ.}=6178$ $IL(2)_{2018թ.}=513$

$CR3_{2019թ.}=94$ $HHI_{2019թ.}=4679$ $IL(2)_{2019թ}= 267$

Վեցից տասը տարի (ներառյալ) հնացմամբ հայկական արտադրության կոնյակների մասով.

$CR3_{2018թ.}=97$ $HHI_{2018թ.}=4699$ $IL(2)_{2018թ.}=183$[10] $IL(3)_{2018թ.}=743$[11]

$CR3_{2019թ}=98$ $HHI_{2019թ}=5584$ $IL(2)_{2019թ}= 269$

Տասը տարուց ավելի հնացմամբ հայկական արտադրության կոնյակների մասով.

$CR3_{2018թ.}=99$ $HHI_{2018թ.}=7242$ $IL(2)_{2018թ.}=933$

$CR3_{2019թ}=99$ $HHI_{2019թ}=6315$ $IL(2)_{2019թ}= 427$

9 Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

10 Քանի որ IL(2)-ը փոքր է 200-ից, նշանակում է արդեն իսկ առկա են շուկայում երկու խոշոր իրացման ծավալներ ունեցող ընկերություններ և անհրաժեշտ է շարունակել հաշվարկը 3 ընկերությունների մասով:

11 Քանի որ ինդեքսը երեք ընկերությունների մասով հաշվարկելիս աճում է՝ հետևում է շուկայում առկա են երկու խոշոր ընկերություններ:

Այսպիսով, կոնյակի շրջանառության ոլորտի ուսումնասիրության արդյունքում վերհանվել են խնդիրներ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ոլորտի մրցակցային միջավայրի վրա:

Մասնավորապես.

- կոնյակի արտադրություն և ներմուծում իրականացնելու համար սահմանված 10 մլն դրամ պետական տուրքի բացասական ազդեցությունը կոնյակի շրջանառության ոլորտի մրցակցային միջավայրի վրա,
- մի շարք արտադրողների կողմից շշալցվող սպիրտային խմիչքների (հայկական հատուկ խմիչք, հայկական օրիգինալ խմիչք, հայկական թունդ խմիչք և այլն) նույնացումը հայկական կոնյակի հետ,
- որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից կոնյակի արտադրության նպատակով ոչ հայկական սպիրտների հնարավոր օգտագործումը,
- «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքով հայկական կոնյակի արտադրության մասով հստակ կարգավորումների և մի շարք պահանջների սահմանումը, սակայն դրանց կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման մեխանիզմների բացակայությունը:

«Թռչնի միս» ապրանքային շուկա: Թռչնի մսի արտադրության ծավալները 2019-2020թ.թ. ունեցել են կայուն աճի միտում, իսկ թռչնի մսի ինքնաբավության մակարդակի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ներմուծման ծավալների փոփոխությամբ (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. Թռչնի մսի արտադրության, ներմուծման, ամբողջական առաջարկի և ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում 2005-2019թթ[12]

[12] ttps://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__7%20Food%20Security/FS-1-2020.px/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6,602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6

Թռչնի մսի ներկրում 2020 և 2019 թվականներին հիմանականում իրականացվել է Ուկրաինայից՝ 30,6% և 36,3%, ԱՄՆ-ից՝ 27,7% և 22,2%, Բրազիլիայից՝ 14,9% և 16,3%, Ռուսաստանից՝ 11,6% և 12,2% և այլն: Փաստորեն թռչնամսի խոշոր մատակարարները երրորդ երկրներն են՝ ԵԱՏՄ երկրներից տեսանելի ներմուծում իրականացվում է միայն Ռուսաստանից:

Այս ապրանքային շուկան միջին կենտրոնացված է, որտեղ կենտրանացվածության գործակիցը 2019թ.-ին եղել է 45<CR-3=56,5<70, իսկ HHI=1772,4, իսկ 2020թ.-ին՝ 45<CR-3=48,3<70, իսկ HHI=1320,9:

Մինչև ԵԱՏՄ-ին անդամագրվելը թռչնի մսի ներմուծման դեպքում մաքսատուրքի դրույքաչափը կազմում էր մաքսային արժեքի 10%-ը, իսկ ԱԱՀ-ն՝ մաքսային արժեքի և մաքսատուրքի հանրագումարի 20%-ը: ԵԱՏՄ-ին անդամակցմամբ պայմանավորված 2015թ. հունվարի 1-ից ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից թռչնի միս ներմուծելու դեպքում գանձվող մաքսատուրքի մեծությունը կազմում է 10%, որը հետագայում աստիճանաբար պետք է բարձրանա և հավասարվի ԵԱՏՄ-ի միասնական մաքսային դրույքաչափերին (աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Երրորդ երկրներց ՀՀ ներմուծված տավարի, խոզի, հավի մսի ներմուծման մաքսային դրույքաչափերը՝ համաձայն ՀՀ-ի ԵԱՏՄ-ին անդամակցելու պայմանագրի

(http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Documents/ru.cct.eaeu.02.pdf)

Ապրանքի անվանում	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Թռչնի միս	10	10	14	18	22	25	50	ԵԱՏՄ միասնական դրույքաչափ [13]

Վերոնշյալ կարգավորումների արդյունքում ներմուծվող մսի տեսականու ինքնարժեքները աստիճանաբար կբարձրանա, որը կբերի տեղական մսի արտադրության ծավալների մեծացման (ներմուծվածի և տեղականի միջև մրցակցությունը կուժեղանա) և ներմուծման երկրների կառուցվածքի փոփոխության (նախընտրություն կտրվի ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծմանը):

Թռչնի մսի շրջանառության ոլորտում առկա խնդրահարույց գործոններ

- ՀՀ Կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1560-Ն որոշում որոշման Հավելվածի համաձայն՝ մսի կամ մսամթերքի փաթեթավորման կամ դրան փակցված պիտակի վրա կատարված հստակ և ընթեռնելի

13 ԵԱՏՄ միասնական դրույքաչափերը ներկայումս հավի մսի մասով կազմում են 25% և 80%՝ կախված ԱՏԳԱԱ ծածկագրից՝ համապատասխանաբար ոչ պակաս 0,2 և 0,7 եվրո 1կգ-ի համար:

մականշվածքի պահանջը չի տարածվում վաճառքի կետերում վերջնական սպառողին հանձնված՝ չփաթեթավորված մսի վրա:

- Վաճառակետերում վերջնական սպառողին իրացվող չփաթեթավորված թռչնամիսը առանց մակնշման իրացման պարագայում կարող է առաջանալ անբարեխիղճ մրցակցության գործողություններ՝ մասնավորապես, հասարակության մոլորեցման կամ այլ դրսևորումներ:
- Չնայած ներմուծված թռչնամսի նկատմամբ հայատառ պարտադիր մակնշման իրավական կարգավորմանը՝ մանրածախ իրացման վաճառակետերում առկա են ներմուծված սառեցված թռչնամիս՝ առանց պատշաճ մակնշման (ծագման երկիր, արտադրության, պահպանման տարեթիվ, պահպանման պայմաններ և այլ):

«Երշիկ» և «Նրբերշիկ» ապրանքային շուկա. «Երշիկ» և «Նրբերշիկ» ապրանքատեսակների արտադրությունները կարգավորվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ), որի համաձայն, ի թիվս այլնի, կանոնակարգման առարկա են՝ «մսային և միս պարունակող երշիկեղենը»:

Կանոնակարգով սահմանվում են նաև Մաքսային միության տարածքում պարտադիր կիրառման և կատարման՝ սպանդային մթերքի և մսամթերքի մակնշվածքին ու փաթեթվածքին ներկայացվող պահանջները, որոնք լրացնում են Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ հաստատված՝ «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 022/2011 տեխնիկական կանոնակարգի և Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ հաստատված՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 005/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջները:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2020թ. տվյալների հիման վրա, որի համաձայն երշիկ և նրբերշիկ ապրանքատեսակների արտադրություն իրականացրել են թվով 63 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 12-ի արտադրության ծավալները միասին կազմում են 99,1 տոկոս, իսկ իրացման ծավալները՝ 99,5 տոկոս: Նշված ապրանքատեսակների արտադրությամբ զբաղվող մնացած թվով 51 տնտեսավարող սուբյեկտների արտադրության ծավալները միասին կազմել են 0,9 տոկոսը (որոնցից յուրաքանչյուրի արտադրության ծավալը չի գերազանցում 0,5 տոկոսը), իսկ իրացման ծավալները՝ 0,5 տոկոս[14]:

---

14 Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ սեփական ուսումնասիրությունների և հարցումների տվյալների հիման վրա:

Արտադրված ընդհանուր 10338418,6 կգ երշիկի և նրբերշիկի մեջ.

Երշիկ – 5450520,0 կգ կամ 52,7%

Նրբերշիկ – 4887898,6 կգ կամ 47,3%

Իրացրվել է (ներառյալ արտահանում) ընդհանուր 10360456,4 կգ երշիկ և նրբերշիկ, որից.

Իրացում

Երշիկ – 1190371,0 կգ կամ 50,1%

Նրբերշիկ – 930150,0 կգ կամ 47,6%

Արտահանում

Երշիկ – 223640,0 կգ կամ 2,2%

Նրբերշիկ – 16295,4 կգ կամ 0,2%:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նշված ընկերությունների կողմից արտադրվել և իրացվել է թվով 608 տեսակի երշիկ և թվով 261 տեսակի նրբերշիկ:

«Երշիկ» և «Նրբերշիկ» ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել այն հնարավոր խնդիրները, որոնք կարող են ազդեցություն ունենալ տվյալ շուկաների մրցակցային միջավայրի վրա: Մասնավորապես, Կանոնակարգի համաձայն՝ եթե մսամթերքը, որի մսային բաղադրամասերի պարունակող զանգվածային բաժինը պարունակում է 60 տոկոսից ավելի, այն հանդիսանում է «մսային արտադրանք», իսկ մսամթերքը, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ և որում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 5-60 տոկոս (ներառյալ)՝ «միս պարունակող մթերք»: Ընդ որում, նշված հասկացությունները պետք է նշվեն մսամթերքի անվանման մեջ կամ տեղադրվեն անվանմանը կից: Այսպիսով, սպառողները տեսնելով մսամթերքի անվանման մեջ նշված կամ անվանմանը կից տեղադրված «միս պարունակող մթերք» կամ «մսային արտադրանք» հասկացությունները՝ չեն կարող պատկերացնել, թե մսամթերքի մեջ քանի տոկոս միս է օգտագործված 5 տոկոս, 10 տոկոս, 40 տոկոս, թե 60 տոկոս, իսկ «մսային արտադրանք» նշումով մսամթերքի մասով 61 տոկոս, 70 տոկոս, 90 տոկոս, թե 100 տոկոս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել շատ արտադրվող երշիկի և նրբերշիկի բաղադրագրերի մեջ թռչնի միսը՝ ըստ զանգվածի, գերազանցում է այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը: Մինչդեռ Կանոնակարգի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ Կանոնակարգի գործողությունը չի տարածվում թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող մթերքների, ինչպես նաև այնպիսի սննդամթերքի վրա, որոնց բաղադրագրի մեջ թռչնի միսը և դրա վերամշակումից ստացվող մթերքներն ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում են այլ մթերատու

կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը: Չնայած այս հանգամանքի, այնուամենայնիվ երշիկները և նրբերշիկները, որոնց բաղադրագրերի մեջ թռչնի միսը ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում է այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը Մաքսային միության որևէ տեխնիկական կանոնակարգով չեն կարգավորվում:

«Հավի ձու կճեպով» ապրանքային շուկա[15]. Ուսումնասիրության ժամանակահատված է դիտարկվել 2018թ. և 2019թ., համաձայն որի 2018թ. ձվի արտադրություն և իրացում են իրականացրել թվով 21, իսկ 2019թ.՝ 28 տնտեսավարող սուբյեկտ:

Հավի ձվի պահանջարկը հանրապետությունում բավարավում է տեղական արտադրության հաշվին: Ըստ 2019թ. տվյալների Լինդայի գործակիցը $IL_2=364>IL_3=292$, այինքն շուկայում առկա է մեկ շուկայական իշխանություն ունեցող ընկերություն: Այս ապրանքային շուկան բարձր կենտրոնացված է, որտեղ 70<CR-3=72,5<100, իսկ HHI=2717:



Տարի	Քանակ	Փոփոխություն
2018	36,340	5.12 %
2017	34,570	-1.65 %
2016	35,150	-4.24 %
2015	36,706	3.63 %
2014	35,420	4.47 %
2013	33,903	-6.42 %
2012	36,229	3.17 %
2011	35,116	-9.16 %
2010	38,655	10.51 %

Գծապատկեր 5. Ձվի արտադրության ծավալների փոփոխությունը ՀՀ-ում 1992-2018 թ.թ. (հազ.տոննա)[16]

---

[15] Հետազոտության արդյունքները, բացահայտված խնդիրները, արված եզրակացություններն ու դրանց հիման վրա ներկայացված առաջարկները ներառված են ՄՊՀ հրապարակման մեջ՝ http://competition.am/uploads/resources/Study_eggs_market.pdf

[16] https://knoema.com/atlas/Armenia/topics/Agriculture/Live-Stock-Production-Production-antity/Production-of-eggs-primary

Այսպիսով, համաձայն կատարված վերլուծությունների և հարցումների արդյունքների կարող ենք առանձնացնել ոլորտում գործունեության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող հետևյալ գործոնները՝

- արտադրության ընդլայնմանը խոչընդոտող գործոններ,
- ոլորտում գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մեծ ծավալի ֆինանսական միջոցներ և կատարված ներդրումների հետգնման համար պահանջվող համեմատաբար երկար ժամանակահատված:

<u>Ատենախոսության երրորդ գլխում՝ «Մրցակցային միջավայրի կարգավորման կառուցակարգերի բարելավման հիմնական ուղիները ՀՀ ագրոպարենային համակարգում»,</u> կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա մշակվել են Հայաստանի ագրոպարենային ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրահիրավական և ինստիտուցիոնալ հիմքերի համալիրության մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ, պետական լիազոր մարմնի իրավասությունների ընդլայնման վերաբերյալ առաջարկություններ: Ուսումնասիրվել են ագրոպարենային ոլորտում մրցակցության պաշտպանության տեսանկյունից պետական օժանդակության և այդ առումով, ընդունվող իրավական ակտերի հիմնավորվածության աստիճանն ու մշակվել են առաջարկություններ դրա ապահովման համար: Մշակվել են ՀՀ ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի բարելավման և տնտեսական մրցակցության պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված համալիր մոտեցումներ:

Մեր համոզմամբ, առաջարկված մոտեցումները կարող են զգալիորեն բարելավել հանրապետությունում ագրոպարենային ոլորտի մրցակցային միջավայրը, հաշվի առնելով երկրի և հատկապես ոլորտի տնտեսական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև նման անցումային շրջան անցած և զարգացած երկրների փորձն ու կիրառվող միջազգային պրակտիկան:

Ագրոպարենային ոլորտում մրցակցային միջավայրի բարելավումը, անշուշտ, պահանջում է մրցակցության պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն ուղղված համալիր մոտեցումների կիրառում տնտեսական բոլոր այն հարաբերություններում, որտեղ մրցակցության պաշտպանության խնդիրներից բացի գոյություն ունեն նաև ոլորտում մրցակցային միջավայրի վրա ազդող բազմաթիվ այլ խնդիրներով պայմանավորված գործոններ: Ուստի, դրանց կառավարումը տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգում պետք է իրականացվի այնպիսի չափանիշներով ու համամասնությամբ, որպեսզի դրանցից որևէ մեկի բարելավումը չհանգեցնի ագրոպարենային ոլորտի ընդհանուր մրցակցային միջավայրի խաթարմանը:

Ագրոպարենային ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության տեսանկյունից պետք է չափազանց կարևորել նաև իրականացվող ընդհանուր տնտեսական քաղաքականությամբ ենթադրվող մոտեցումների հիմնավորվա-

ծության աստիճանը, հակառակ դեպքում դրանք կարող են խոչընդոտել ոլորտում ազատ մրցակցային միջավայրի ձևավորմանը: Ոլորտում մրցակցության պաշտպանության բնագավառում առկա խնդիրների հնարավոր լուծման և հայեցակարգային մոտեցումների մշակման համար ներկայացվող հետազոտությունում մակրոտնտեսական համամասնությունների ամբողջ սպեկտրից ընտրվել են այն հիմնական բաղադրիչները, որոնք անմիջականորեն կարող են ազդել ոլորտում մրցակցային միջավայրի վրա:

Առողջ մրցակցային միջավայրի ձևավորումը ագրոպարենային ոլորտում բավականաչափ բարդ և աստիճանական զարգացում ունեցող գործընթաց է, որը մշտապես պետք է համահունչ լինի ոչ միայն ոլորտում այլ նաև երկրում վարվող ընդհանուր տնտեսական քաղաքականությանը, իսկ դրա շարունակական բարելավումը պետք է դիտարկվի տնտեսության զարգացման տվյալ փուլում առկա մակրոտնտեսական և մրցակցային խնդիրների համատեղ լուծման, ինչպես նաև դրանց հաեցակարգային մոտեցումների մշակման շրջանակներում:

Ագրոպարենային ոլորտում պետության ընդհանուր տնտեսական քաղաքականության ռազմավարությունը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել վերը շարադրված մակրոտնտեսական համամասնությունների փոխկապակցված ազդեցությունը ազատ մրցակցային միջավայրի վրա, մշտապես ուշադրության կենտրոնում պահելով դրանց հիմնավորվածության ռացիոնալ հարաբերությունը, քանի որ հնարավոր չէ պատկերացնել արդյունավետ մրցակցային քաղաքականության իրականացում՝ առանց մրցակցության ոլորտի հետ առնչվող և քննարկված հարցերի համատեղ լուծման: Այսպիսի մոտեցման վրա է հիմնված ազատ մրցակցության ապահովման քաղաքականության առաջարկվող հայեցակարգը՝ անհրաժեշտ միջոցառումների իր համալիր ծրագրով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները թույլ են տալիս հանգել որոշակի հետևությունների և մշակել առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային համակարգում առկա ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման ուղիների վերաբերյալ: Իրականացված հետազոտությունների և վերլուծությունների ամփոփ արդյունքները կայանում են հետևյալում.

1. Ելնելով սպառողների շահերի պաշտպանությունից, ինչպես նաև հնարավոր անբարենիոզ մրցակցության երևույթների կանխարգելման և բացահայտման կարևորությունից, առաջարկում ենք Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 034/2013 տեխնիկական կանոնակարգում.

ա) սահմանել՝ մսամթերքի, այդ թվում՝ երշիկի և նրբերշիկի բաղադրության մակնշման մեջ մսի տեսակներից բացի օգտագործված մսի քանակի՝ տոկոսային արտահայտությամբ, մակնշման պարտադիր պահանջ,

բ) սահմանվող նորմերը տարածել նաև թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող մթերքների, ինչպես նաև այնպիսի սննդամթերքի վրա, որի բաղադրագրի մեջ թռչնի միսը և դրա վերամշակումից ստացվող մթերքներն ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում են այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը՝ հանելով 4-րդ կետի «գ» ենթակետով սահմանված բացառությունները:

2. ԵԱՏՄ տարածքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով առաջարկում ենք վերանայել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար կիրառվող ԱԱՀ դրույքաչափը և այն հավասարեցնել ԵԱՏՄ անդամ երկրների կողմից կիրառվող ԱԱՀ դրույքաչափին, այն է՝ կիրառվող 20 տոկոսի փոխարեն սահմանել 10 տոկոս:

3. ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում առաջարկում ենք «սփրեդ» ապրանքատեսակի համար սահմանել ԱՏԳ ԱԱ ծածկագիր: Այն հնարավորություն կտա ոչ միայն տարանջատել ապրանքը «մարգարինից», այլ նաև հստակեցնել տվյալ ապրանքի համար նախատեսված մաքսատուրքի դրույքաչափը, որպեսզի տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն չունենան տարբեր ԱՏԳ ԱԱ ծածկագրերի ներքո ներմուծումներ իրականացնելով՝ խուսափեն համապատասխան մաքսատուրքի վճարումից:

4. Թռչնաբուծության զարգացման և ոլորտում առկա հնարավոր ստվերային շրջանառության ծավալների կրճատման և հավասար մրցակցության ապահովման նպատակով, առաջարկում ենք թռչնի ձվի իրացումն

իրականացնել բացառապես տուփերով կամ փաթեթավորված՝ դրոշմապիտակի պարտադիր առկայությամբ:

5. Կոնյակի շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների միջև հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով կոնյակի արտադրության և ներմուծման իրավունք ձեռք բերելու համար առաջարկում ենք վերանայել սահմանված պետական տուրքի չափը և սահմանել էականորեն ավելի փոքր չափ, քան ներկայիս 10 մլն դրամը՝ միաժամանակ ներդնելով միավոր լիտրի համար պետական տուրքի գանձման համակարգ, այն է՝ պետական տուրք սահմանել ըստ ներկրման ծավալի (լ/դրամ):
6. Հայկական կոնյակի հետ որոշ շշալցվող սպիրտային խմիչքների նույնացումից խուսափելու նպատակով առաջարկում ենք սահմանել կոնյակի շշալցման և փաթեթավորման համար մակնշման հստակ պահանջներ՝ ինչը հնարավորություն կտա բացառելու սպառողների շրջանում մոլորեցման և շփոթության հնարավոր առաջացումը «հայկական հատուկ խմիչք», «հայկական թունդ խմիչք» կամ այլ մակնշմամբ և շոբոթության աստիճան կոնյակին նման ապրանքներից:
7. Տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող պետական օժանդակության գնահատման և վերահսկման նպատակով առաջարկում ենք սահմանել.

ա) հիմնական չափանիշներ, որոնց առկայության դեպքում տրամադրվող օժանդակությունը կդիտարկվի որպես պետական օժանդակություն, մասնավորապես.

- ✓ տնտեսական առավելություն,
- ✓ պետական միջոցներ,
- ✓ ընտրողականություն,
- ✓ մրցակցության և առևտրի խաթարում,

բ) մինչև պետական օժանդակության տրամադրումը ՄՊՀ դիմելու և եզրակացություն ստանալու պարտադիր նորմ,

գ) պետական օժանդակության «վերին սահման» (de-minimis) և դրա բավարարման դեպքում՝ տրամադրման պարզ ընթացակարգերի կիրառման մեխանիզմներ:

8. Ապրանքային շուկայում «Անձանց խումբը» որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ դիտարկելը կարևորվում է հատկապես գերիշխող դիրքի գնահատման, համակենտրոնացումների դիտարկման և հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ժամանակ: Սակայն միշտ չէ, որ Օրենքով թվարկված պայմանների առկայությունը կարող է վկայել, որ ընկերություններին կարելի է դիտարկել որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ, հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ ընկերություններն իրենց գործունեությամբ և տնտեսական շահերով կապ չունեն միմյանց հետ: Խնդրի կարգավորման համար առաջարկում ենք «Անձանց խումբ»

հատկորոշել բացառապես Հանձնաժողովի որոշմամբ, որի կազմում ընդգրկված ընկերությունները կունենան մեկ ընդհանուր տնտեսական շահ և միայն այդ փաստի առկայության դեպքում «Անձանց խումբը» դիտարկվի որպես մեկ տնտեսավարող սուբյեկտ:

9. Նկատի ունենալով, այն հանգամանքը, որ հակամրցակցային համաձայնությունները բավականաչափ դժվար ապացուցվող իրավախախտումներ են, տվյալ խնդրի լուծման համար առաջարկում ենք կիրառել միջազգային պրակտիկայում գործող «վաղորդյան այցերի» մեխանիզմը, երբ հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և ապացուցման համար առանց նախազգուշացման ստուգումներ են իրականացվում ենթադրյալ մասնակից ընկերությունների մոտ՝ առգրավելով ցանկացած տեղեկատվական բազա, որը կարող է հիմք և ապացույց հանդիսանալ համաձայնությունների բացահայտման համար:

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 06.11.2000թ. ՀՕ-112, լրամշակված, փոփոխված և խմբագրված 23.03.2018թ. ՀՕ-249-Ն) բացահայտվել են նաև խնդիրներ, որոնց լուծման վերաբերյալ առաջարկները 2020 թվականի սեպտեմբերին ներկայացվել են ՀՀ ՏՄՊՊՀ և ներառվել են օրենսդրական փոփոխությունների փաթեթում: Մասնավորապես.

1. Տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող համակենտրոնացումները վերահսկվում են Հանձնաժողովի կողմից, սակայն Օրենքը չի նախատեսում «Անձանց խմբի» ներսում իրականացվող վերակազմակերպումների, գործողությունների կամ գործարքների վերահսկման մեխանիզմ, ինչի շնորհիվ իրականացվող համակենտրոնացումները շատ դեպքերում չեն բացահայտվում, իսկ բացահայտված դեպքերում էլ խախտման վարույթը կարճվում է՝ համակենտրոնացումն «Անձանց խմբի» ներսում իրականացված լինելու հիմքով: Խնդրի կարգավորման համար առաջարկվել է Օրենքով սահմանել պարտավորություն «Անձանց խումբ» հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների համար վերակազմակերպումները, գործողությունները կամ գործարքները կատարելուց հետո Օրենքով սահմանված ժամկետում դրա մասին տեղեկացնել լիազոր մարմնին՝ ներկայացնելով «Անձանց խմբում» ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների և նրանց միջև կայացված համակենտրոնացման վերաբերյալ հավաստի և կեղծ տվյալներ չպարունակող տեղեկություններ:

Ներկայացված առաջարկի հիման վրա Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետը խմբագրվել ու ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից հետևյալ խմբագրությամբ.

«Անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտները սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում նշված վերակազմակերպումները,

գործողությունները կամ գործարքները կատարելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, տեղեկացնում են Հանձնաժողովին» («Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, փոփ. 03.03.21թ. ՀՕ-29-Ն, գլուխ 6, հոդված 14, կետ 11):

2. Օրենքը նախատեսում է միայն հորիզոնական և ուղղահայաց հակամրցակցային համաձայնությունների արգելք, մինչդեռ տնտեսական մրցակցության վրա բացասական ազդեցություն ունեն նաև դրանց մեջ չներառվող այլ հակամրցակցային համաձայնություններ: Խնդրի կարգավորման համար առաջարկվել է Օրենքով սահմանել նաև «Այլ համաձայնություններ» հասկացությունը՝ որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև կնքվող հակամրցակցային համաձայնություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Ներկայացված առաջարկի հիման վրա Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ մասը խմբագրվել ու ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից հետևյալ խմբագրությամբ.

«2. Հակամրցակցային համաձայնությունները կնքվում (կայացվում) են՝ .... 3) որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների միջև, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, ինչպես նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված այլ համաձայնություններ (այլ համաձայնություն)»: («Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, փոփ. 03.03.21թ. ՀՕ-29-Ն, գլուխ 2, հոդված 5, կետ 2 մաս 3):

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հովհաննիսյան Դ.Ա. Մրցակցային իրավիճակը և առկա հիմնախնդիրները կաթնամթերքի ոլորտում: // «Ֆիննանսներ և էկոնոմիկա» հանդես, N7-8 (203-204), Երևան, 2017. - էջ 108-110
2. Ղազարյան Է.Ս., Հովհաննիսյան Դ.Ա. Մրցակցային իրավիճակը և առկա հիմնախնդիրները ձկան շրջանառության ոլորտում: // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N7-8 (203-204), Երևան, 2017. - էջ 111-114
3. Հովհաննիսյան Դ.Ա. Խոզի, տավարի, հավի մսի ներմուծման և իրացման ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում առկա խնդիրները՝ ազատ մրցակցության ապահովման գործընթացում: // «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, N1-2, Արցախ, 2017. - էջ 108-112
4. Հովհաննիսյան Դ.Ա. Ձկան շրջանառության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը՝ ազատ մրցակցության ապահովման գործընթացում: // «Այլընտրանք» գիտական հանդես, N3, Երևան, 2017. - էջ 22-26
5. Հովհաննիսյան Դ.Ա. Մրցակցային իրավիճակը և առկա հիմնախնդիրները «Պանիր» ապրանքային շուկայում: // «Այլընտրանք» գիտական հանդես, N3 Երևան, 2017. - էջ 27-32
6. Казарян Э.С., Оганесян Д.А. Необходимость государственного регулирования конкурентной среды в агропродовольственной сфере (теоретический аспект). // Сборник статей по материалам XIII Международной научно-практической конференции, «Стратегия развития аграрной сферы экономики проблемы и пути решения». Краснодар, КубГАУ, 2017. - ст. 44-49
7. Հովհաննիսյան Դ.Ա. Տնտեսական մրցակցության հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում: // «Материалы международной научной конференции по актуальным проблемам развития сельского хозяйства в Республике Армения», հոկտեմբեր, Երևան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան (https://old.anau.am/images/stories/contentpic/texekagir/gitajoxov/005%20%20page%20%20247-325), 2017.- էջ 279-283
8. Հովհաննիսյան Դ.Ա. Ազատ մրցակցային միջավայրի բարելավման ուղիները ՀՀ ագրոպարենային ոլորտում: // «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N1-2 (209-210), Երևան, 2018. - էջ 71-73
9. Маркосян Т.А., Оганесян Д.А., Саргсян Ш.С., Микаелян А.Г. Перспективы законодательной реформы в сфере защиты экономической конкуренции в Республике Армения // Конкуренция и антимонопольное регулирование в

Евразийском экономическом союзе, Евразийская экономическая комиссия, N1, Москва, 2020г. – ст. 43-50 (http://www.eurasiancommission.org/ru/act/caa/Documents/Конкуренция%20и%20антимонопольное%20регулирование%20в%20ЕАЭС_№1_2020.pdf)

10. Ալեքսանյան Վ.Ս., Հովհաննիսյան Դ.Ա. «Կարագ» ապրանքային շուկայի մրցակցային միջավայրը և դրա բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2020թ. հոկտեմբեր-դեկտեմբեր - էջ 289-295
11. Ալեքսանյան Վ.Ս., Հովհաննիսյան Դ.Ա. Մսամթերքի շրջանառության ոլորտում հնարավոր անբարեխիղճ մրցակցության երևույթների կարգավորումներն ու դրանց բարելավման ուղիները ԵԱՏՄ շրջանակներում: // «Բանբեր Երևանի համալսարանի» (տնտեսագիտություն) գիտական հանդես, N1, Երևան, 2021թ. - էջ 18-28
12. Ալեքսանյան Վ.Ս., Հովհաննիսյան Դ.Ա. Թռչնաբուծության ոլորտի մրցակցային միջավայրի բարելավման ուղիները ՀՀ-ում: // «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2021թ. հուլիս-սեպտեմբեր - էջ 37-44

ОГАНЕСЯН ДАВИД АЛЕКСАНОВИЧ

КОНКУРЕНТНАЯ СРЕДА И ПУТИ ЕЕ РЕГУЛИРОВАНИЯ В АГРОПРОДОЛЬСТВЕННОЙ СФЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 28 декабря 2021 года в 14:00 часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна, 74.

РЕЗЮМЕ

Основной целью диссертации является разработка концептуальных подходов и рекомендаций, направленных на обеспечение свободной, добросовестной конкуренции и повышение эффективности конкурентной политики в агропродовольственной сфере РА, с учетом анализа состояния конкуренции на некоторых товарных рынках и существующих проблемах агропродовольственной системы, что будет способствовать обеспечению свободной и добровестной конкуренции в данной сфере.

Теоретической основой для проведенных исследований являются работы различных экономических школ, направлений, в частности, классические труды по теории конкуренции, исследования известных отечественных и зарубежных авторов по основным проблемам рыночной и переходной экономик и их регулированию.

Информационной базой для исследования являются годовые программы и отчеты Государственной комиссии по защите экономической конкуренции РА, официальные публикации государственных органов, данные Статистического комитета Республики Армения и собранная информация о хозяйствующих субъектах, осуществляющих деятельность на определенных товарных рынках агропродовольственного комплекса.

Развитие агропродовольственного комплекса в республике существенно обусловлено обеспечением свободной конкурентной среды в сфере, что может способствовать как расширению производства сельскохозяйственной продукции, ее переработки, продаж, так и рынков агропродовольственной продукции. Для достижения данной цели в работе изучен международный опыт государственного регулирования конкуренции в агропропродовольственной системе и исследованы условия развития конкурентной среды в агропропродовольственной сфере РА. В работе анализированы основы регулирования конкуренции и этапы ее развития в агропропродовольственной сфере РА, состояние экономической конкуренции на некоторых товарных рынках в сфере агропропродовольственного комплекса республики и выявлены

актуальные вопросы конкуренции, проведен анализ воздействия законодательства о защите конкуренции в Армении на реформы в агропродовольственной системе. Проанализированы факторы, определяющие эффективность политики защиты экономической конкуренции в агропродовольственной системе и представлены пути их совершенствования, а также разработаны стратегические положения по развитию конкуренции в агропродовольственной системе Республики Армения.

Научная новизна диссертации характеризуется следующими основными результатами: по итогам всестороннего изучения конкурентной среды в сфере агропродовольственной системы и процесса защиты экономической конкуренции выявлены основные проблемы защиты конкуренции на товарных рынках агропродовольственной системы, разработаны пути их преодоления. Разработаны институциональные механизмы расширения полномочий государственного уполномоченного органа по защите экономической конкуренции в агропродовольственной системе и их практическое применение. В целях защиты прав потребителей в сфере агропродовольственной системы Республики Армения выявлены существующие проблемы и разработаны пути их решения.

В результате всестороннего изучения состояния конкуренции в агропродовольственной системе выявлены косвенные факторы, негативно влияющие на конкурентную среду на товарных рынках, разработаны пути их преодоления. По итогам изучения рыночных отношений выявлены основные проблемы защиты экономической конкуренции на товарных рынках агропродовольственной сферы. Разработаны пути их решения, предложены законодательные и институциональные мероприятия, направленные на развитие конкуренции в данной сфере. На основании изучения конкурентной политики агропродовольственной системы республики разработаны предложения по предоставлению государственному регулирующему органу новых полномочий для осуществления контроля, а также проведения обязательной экспертизы принимаемых правовых актов. Разработаны стратегические положения совершенствования политики экономической конкуренции в агропродовольственной системе РА.

Представленные в диссертации предложения и рекомендации по проведению конкурентной политики, разработке законодательных реформ и стратегических направлений развития в целях обеспечения конкурентной среды в агропродовольственной системе РА могут быть использованы государственными уполномоченными органами РА, заинтересованными в защите экономической конкуренции и развитии агропродовольственной системы РА при усовершенствовании законодательства и правовых актов, разработке программных стратегичеких документов.

HOVHANNISYAN DAVIT

THE COMPETITION ENVIRONMENT AND THE WAYS OF ITS REGULATION IN THE AGRI-FOOD SECTOR IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty of 08.00.02 – "Economics and Management of Economy and its Spheres"

The defense of the thesis will take place on 28 december 2021, at 14:00 o'clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009.

SUMMARY

The main purpose of the thesis is to develop conceptual approaches and proposals for improving the free, fair competition environment and increasing the effectiveness of antitrust policy in agri-food sector, taking as a basis the analysis of the competition situation in a number of commodity markets of agri-food system and the current problems, which will facilitate free and fair competition in the field.

Academic papers and focus areas, specifically, the classical works on the theory of competition and studies of prominent local and foreign scholars on the key aspects of market economy and economies in transition, as well as regulation thereof served as theoretical background for this particular research.

The informational background for the study included the annual activity plans and reports of the State Commission for the Protection of Economic Competition of RA, official publications of public authorities, datasets of the RA Statistical Committee and information on the activities of economic entities operating in some commodity markets of agri-food system.

Successful development of the agri-food industry in RA is essentially driven by free competition environment in the field, which can support the expansion of agricultural produce, its processing and sales, as well as agri-food markets.

To achieve this goal, this study looks into the international practices of state regulation of competition in agri-food industry and explores the drivers of competitive environment in RA agri-food industry. This paper provides a review of the regulatory framework and phases of development of competition in RA agri-food industry, the status of economic competition in a number of commodity markets within the industry, and findings regarding existing competition issues, as well as impact assessment of the Armenian competition legislation on the reforms in agri-food industry. The work includes assessment of factors determining the effectiveness of the policy of protection of economic competition in the agri-food system, recommendations regarding the ways of improvement as well as elaboration of

strategies for regulation of competition environment in agri-food industry of the Republic of Armenia

The scientific novelty of the thesis is reflected in the following main results: comprehensive study of the competition environment and the process of protection of economic competition in agri-food industry revealed the main challenges of economic competition protection in the commodity markets of RA agri-food system, and ways to overcome them have been developed. Institutional arrangements and implementation measures to expand the mandate of the competent authority responsible for protection of economic competition in the agri-food industry were elaborated.

The existing issues have been revealed and the ways of their solution have been developed in order to protect the interests of consumers in RA agri-food system. Strategic provisions for improving the policy of economic competition protection in RA agri-food system have been developed.

Moreover, comprehensive study of the status of competition in the agri-food industry has revealed indirect factors having adverse impact on the competition environment in product markets. The ways have been developed to overcome them. The study of market relations has revealed key challenges in the protection of economic competition in the agri-food product markets. The ways to their solution were developed; legislative and institutional measures are recommended to improve the competition in the sector. Based on the analysis of the policy of the protection of economic competition in the agri-food industry in RA, recommendations were designed to grant new powers to the state regulatory body to exercise control, as well as provide mandatory review of government regulations to be adopted. Basic strategies are elaborated to improve the policy of economic competition in the agri-food industry of Armenia.

Recommendations proposed in this paper for implementation of competition policy, planning of legal reforms and strategic areas of development to safeguard competitive environment in the agri-food industry of RA can be used in the process of drafting amendments to laws and regulations and policy papers by mandated government authorities of the RA, interested in protection of economic competition and development of agri-food industry in Armenia.